



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

21 ջեհաննեթյան 2016 թ. № 240 - Ա/1
ք. Երևան

ԵՎՐՈՊԱՅԻ, ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԻ
ՄԵԿՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԻՍՈՒՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ
ԹԻՄԵՐԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՅԻԱՆԵՐԻ
ՖԻՆԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱՅԻ ԾԱԽՍԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 19-րդ հոդվածի, 2007 թվականի հուլիսի 12-ի № 825-Ն որոշման № 1
հավելվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետի հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) Եվրոպայի, աշխարհի առաջնությունների, միջազգային մրցաշարերի մեկնող
Հայաստանի Հանրապետության պատվիրակության և ուսումնամարզական
հավաքների մասնակիցների կազմի ձևավորման և ընտրության կարգը՝ համաձայն № 1
հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի անդամության
թեկնածուների կազմի ձևավորման կարգը՝ համաձայն № 2 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող
Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաների
ֆինանսավորման և փաստացի ծախսերի ընդունման կարգը՝ համաձայն № 3
հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ, ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՄՐՑԱՇԱՐԵՐԻ, ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՇԱԽՄԱՏԻ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԻՎԵՐՍԻԱԴԱՆԵՐԻ ՄԵԿՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ
ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, միջազգային մրցաշարերի, աշխարհի և Եվրոպայի գավաթի խաղարկությունների, շախմատի համաշխարհային օլիմպիադաների և (կամ) ունիվերսիադաների (այսուհետ՝ Միջոցառում) մեկնող Հայաստանի Հանրապետության պատվիրակության (այսուհետ՝ Պատվիրակություն) և ուսումնամարզական հավաքների մասնակիցների կազմի ձևավորման և ընտրության հետ կապված հարաբերությունները:

2. Պատվիրակության և ուսումնամարզական հավաքների թեկնածուների կազմի ձևավորումը և ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաների կողմից՝ սույն կարգի համաձայն:

II. Պատվիրակության և ուսումնամարզական հավաքների մասնակիցների կազմի ձևավորման և ընտրության պայմանները

3. Պետական բյուջեի միջոցներով Եվրոպայի և աշխարհի առաջնությունների (մեծահասակներ, երիտասարդներ, պատանիներ), միջազգային մրցաշարերի, աշխարհի և Եվրոպայի գավաթի խաղարկությունների, շախմատի համաշխարհային օլիմպիադաների և (կամ) ունիվերսիադաների մեկնող Պատվիրակության կազմը ձևավորվում է՝

1) մարզաձևի միջազգային ֆեդերացիայի կանոնակարգի և պաշտոնական հրավերի համապատասխան,

2) միջազգային մրցաշարի կազմակերպիչի պաշտոնական հրավերի համապատասխան:

4. Միջազգային մրցաշարերի մեկնելիս յուրաքանչյուր քաջային կարգում, վարժաձևում Հայաստանի Հանրապետության մարզաձևի ազգային ֆեդերացիան ներկայացնում է երկուսից ոչ ավել մարզիկ, որոնք ընդգրկված են տվյալ մարզաձևի Հայաստանի Հանրապետության հավաքական թիմում, ներկայացված են Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի գլխավոր և (կամ) ավագ մարզչի կողմից՝ մարզչական խորհրդի որոշմամբ:

5. Եվրոպայի և աշխարհի առաջնությունների, միջազգային մրցաշարերի մեկնող Պատվիրակության կազմում կարող են ընդգրկվել՝

1) մինչև երեք մարզիկների դեպքում.

ա. երկու մարզիչ,

բ. մեկ մրցավար:

2) չորսից վեց մարզիկների դեպքում.

ա. գլխավոր մարզիչ,

բ. ավագ մարզիչ,

գ. առաջատար մարզիկի անձնական մարզիչ կամ պատվիրակության ղեկավար,

դ. բժիշկ

ե. մեկ մրցավար:

3) ամբողջական թիմի դեպքում.

ա. պատվիրակության ղեկավար

բ. գլխավոր մարզիչ,

գ. ավագ մարզիչ,

դ. առաջատար մարզիկի անձնական մարզիչ,

ե. մրցավար (մեկ կամ երկու),

զ. բժիշկ

է. մերսող

6. Պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող ուսումնամարզական հավաքների մասնակիցների կազմը ընտրվում է՝

1) մենապայքարային մարզաձևերում. ծանր և գերծանր քաշային կարգերում մինչև երկուական մարզիկ, իսկ մնացած քաշային կարգերում՝ մինչև չորսական մարզիկ՝ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի (մեծահասակներ, երիտասարդներ, պատանիներ) գլխավոր և (կամ) ավագ մարզչի կողմից, մարզչական խորհրդի որոշմամբ, հիմք ընդունելով մարզիկների արդյունքները.

2) կիրառական մարզաձևերում. տվյալ մարզաձևի Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի (մեծահասակներ, երիտասարդներ, պատանիներ) գլխավոր և (կամ) ավագ մարզչի կողմից, մարզչական խորհրդի որոշմամբ՝ հիմք ընդունելով մարզիկների արդյունքները: Նույն վարժաձևում կարելի է ընդգրկել մինչև երկու մարզիկ.

3) խաղային մարզաձևերում. խաղային մարզաձևերի թիմերի կազմը:

7. Տասնհինգ և ավել մարզիկների դեպքում ուսումնամարզական հավաքի մասնակիցների կազմում կարող են ընդգրկվել մինչև չորս մարզիչ:

8. Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի գլխավոր և (կամ) ավագ մարզչի կողմից՝ ուսումնամարզական հավաքի մասնակիցների կազմում կարող է ընդգրկվել լավագույն մարզիկի անձնական մարզչը, ինչպես նաև մեկ բժիշկ և մերսող:

III. Պատվիրակության և ուսումնամարզական հավաքի մասնակիցների կազմի ձևավորման և ընտրության նպատակներն ու խնդիրները

9. Պատվիրակության և ուսումնամարզական հավաքի մասնակիցների կազմի ձևավորման և ընտրության նպատակներն ու խնդիրներն են՝

1) պետական բյուջեի միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործում.

2) ուսումնամարզական հավաքների միջոցով լավագույն մարզիկների ի հայտ բերումը և նրանց հետ անհատական աշխատանքների իրականացումը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ
ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի անդամության թեկնածուների կազմի (այսուհետ՝ հավաքական թիմերի կազմ) ձևավորման հետ կապված հարաբերությունները:

2. Հավաքական թիմերի կազմերում ընդգրկվող մարզիկների ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաների կողմից՝ սույն կարգի համաձայն:

II. Հավաքական թիմերի անդամության թեկնածուների կազմի ձևավորման պայմանները

3. Հավաքական թիմերի կազմը ձևավորվում է՝

1) մարզաձևերի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա առաջնությունների (մեծահասակներ, երիտասարդներ, պատանիներ) առաջինից երրորդ տեղերը գրաված մարզիկներից.

2) Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի գլխավոր և (կամ) ավագ մարզչի կողմից, հավաքական թիմի կազմում կարող են ընդգրկվել նաև Հայաստանի Հանրապետության առաջնությանը հարգելի պատճառով չմասնակցած լավագույն մարզիկները.

3) խաղային մարզաձևերի հավաքական թիմերի կազմը ձևավորվում է տվյալ հավաքական թիմի գլխավոր և (կամ) ավագ մարզչի կողմից՝ տվյալ մարզաձևի ակումբների լավագույն մարզիկներից:

4. Հավաքական թիմի կազմի ձևավորման արդյունքում հավաքական թիմի վերջնական կազմը կարող է փոխվել Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի գլխավոր և (կամ) ավագ մարզչի կողմից՝ սույն կարգի 3-րդ կետի համաձայն:

III. Հավաքական թիմերի անդամության թեկնածուների կազմի ձևավորման նպատակը

5. Հավաքական թիմերի կազմի ձևավորման նպատակն է լավագույն մարզիկների ի հայտ բերելը և հավաքական թիմերը համալրելը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԶԵՎԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻ
ՖԻՆԱՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ԾԱԽՍԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության առաջնությունների, հավաքական թիմերի ուսումնամարզական հավաքների, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, միջազգային մրցաշարերի, աշխարհի և Եվրոպայի գավաթի խաղարկությունների, շախմատի համաշխարհային օլիմպիադաների և (կամ) ունիվերսիադաների (այսուհետ՝ Միջոցառում) կազմակերպման, անցկացման և դրանց մասնակցության ապահովման նպատակով նախատեսված միջոցների Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին (այսուհետ՝ Ֆեդերացիա) տրամադրման և վերջիններիս փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացման և ընդունման հետ կապված հարաբերությունները:

II. Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաների ֆինանսավորումը

2. Բյուջետային տարվա մինչև դեկտեմբերի 10-ը Ֆեդերացիան Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) է ներկայացնում իր գալիք տարվա միջոցառումների ժամանակացույցը:

3. Ֆեդերացիայի և Նախարարության միջև սույն կարգի 1-ին կետը իրականացնելու նպատակով կնքվում է ֆինանսավորման պայմանագիր համաձայն սույն հավելվածով հաստատված N° 1 Ձևի:

4. Բյուջետային տարում միջոցառման ֆինանսավորում ստանալու նպատակով Ֆեդերացիան Նախարարություն է ներկայացնում հայտ, հիմնավորող փաստաթղթերով՝ համաձայն սույն հավելվածով հաստատված N° 2 Ձևի:

5. Նախարարության աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված բացասական մասնագիտական եզրակացության կամ հայտում անհամապատասխանություններ և (կամ) տեխնիկական սխալներ հայտնաբերվելու դեպքում Ֆեդերացիան ծանուցվում է էլեկտրոնային փոստի միջոցով՝ մեկ օրվա ընթացքում, ճշտումներ կատարելու և նոր հայտ ներկայացնելու համար:

6. Ֆեդերացիան ծանուցումը ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում ներկայացնում է նոր հայտ, որը ենթակա է քննարկման սույն կարգի համաձայն:

7. Նախարարության աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված դրական մասնագիտական եզրակացության դեպքում Նախարարության աշխատակազմի ֆինանսավորման համար պատասխանատու ստորաբաժանումը կատարում է միջոցառման ծախսերի վերլուծություն, հաշվարկ և կազմում նախահաշվի նախագիծ:

8. Ներկայացված և դրական մասնագիտական եզրակացություն ստացած հայտերի հիման վրա կազմված նախահաշվի նախագիծը ներկայացվում է Նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ հաստատման:

9. Նախարարության աշխատակազմի ղեկավարը մինչև ֆինանսավորման ամսվան նախորդող ամսվա 28-ը, կա՛մ հաստատում է նախահաշվի նախագիծը և Նախարարության աշխատակազմի ֆինանսավորման համար պատասխանատու ստորաբաժանումը հանձնարարում է կազմել ֆինանսավորման հայտը, կա՛մ նախահաշվի նախագիծը վերադարձնում է խմբագրման:

10. Հաստատված նախահաշիվը Նախարարության աշխատակազմի ֆինանսավորման համար պատասխանատու ստորաբաժանումը մեկ օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է Ֆեդերացիային և մեկական օրինակ տրամադրում Նախարարության աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանումներին:

11. Մինչև ֆինանսավորվող ամսվա առաջին աշխատանքային օրը Նախարարության աշխատակազմի ֆինանսավորման համար պատասխանատու ստորաբաժանումը Նախարարության աշխատակազմի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ ամսվա ֆինանսավորման ամփոփ հայտը՝ ըստ Ֆեդերացիաների, որը Նախարարության աշխատակազմի ղեկավարը հաստատում է և ապահովում ֆինանսավորումը:

III. Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաների կողմից իրականացված միջոցառումների փաստացի ծախսերի հաշվետվությունների ներկայացումը և ընդունումը

12. Ֆեդերացիան մինչև ֆինանսավորման ամսվան հաջորդող ամսվա 15-ը Նախարարություն է ներկայացնում նախորդ ամսվա իրականացված միջոցառման Հաշվետվությունը՝ համաձայն սույն հավելվածով հաստատված № 3 Ձևի:

13. Հաշվետվությունների ընդունման համար հիմք է հանդիսանում սույն կարգի 10-րդ կետի համաձայն էլեկտրոնային փոստի միջոցով առաքված նախահաշիվը:

14. Նախարարության աշխատակազմի հաշվետվությունների ընդունման համար պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է Հաշվետվությունը և առկա շեղումների վերաբերյալ անհապաղ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում Ֆեդերացիային՝ պահանջելով բացատրություն՝ համապատասխան հիմնավորումներով:

15. Բացատրությունը քննարկվում է Նախարարության աշխատակազմի քաղաքականության համար պատասխանատու ստորաբաժանման հետ՝ մասնագիտական եզրակացություն ստանալու համար, և ընդունվում վերջինիս դրական մասնագիտական եզրակացության առկայության դեպքում:

16. Սույն կարգի 14-րդ կետում նշված բացատրության վերաբերյալ Նախարարության աշխատակազմի քաղաքականության համար պատասխանատու ստորաբաժանման բացասական մասնագիտական եզրակացության դեպքում Հաշվետվությունը մերժվում է, որի մասին Նախարարությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է Ֆեդերացիային:

17. Յուրաքանչյուր ամսվա մինչև 25-ը ընդունված բոլոր հաշվետվությունները Նախարարության աշխատակազմի հաշվետվությունների ընդունման համար պատասխանատու ստորաբաժանումը ներկայացվում է Նախարարության աշխատակազմի ղեկավարին:

18. Նախարարության աշխատակազմի ղեկավարը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվությունը կա՛մ մակագրում է Նախարարության աշխատակազմի ֆինանսավորման համար պատասխանատու ստորաբաժանմանը, կա՛մ վերադարձնում՝ լրացուցիչ ուսումնասիրության:

19. Սույն կարգի 12-րդ կետով սահմանված ժամկետում Ֆեդերացիայի կողմից չներկայացված Հաշվետվությունը կարող է հիմք հանդիսանալ տվյալ Ֆեդերացիայի կողմից ներկայացված հայտերը չքննարկելու համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ

(մարզաձևի ազգային ֆեդերացիայի անվանումը)

« » _____ 20__ թ.

**ՀԱՅՏ
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ**

Մարզաձևը	
Միջոցառման անվանումը	
Անցկացման ժամկետը, վայրը	

h/h	Ծախսեր	Մարդ	Օր	Գումարը (<< դրամ)	Գումարը արտ-արժույթով	Փոխար-ժեքը	Ընդամենը (<< դրամ)
1							
2							
3							

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄ
(Աշխարհի, Եվրոպայի և միջազգային մրցաշարերի)

N	Պատվիրակության կազմը	Քանակը (թվերով և տառերով)
1	Պատվիրակության ղեկավար	
2	Գլխավոր մարզիչ	
3	Ավագ մարզիչ	
4	Անձնական մարզիչ	
5	Մարզիկ	
6	Մրցավար	
7	Բժիշկ	
8	Մեքստղ	

Մարզաձևի ազգային ֆեդերացիայի նախագահի
կամ լիազորված անձի ազգանունը, անունը

ստորագրություն

Կ. Տ.

ՀԱՅՏ
ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ

Մարզաձևը	
Միջոցառման անվանումը	
Անցկացման ժամկետը, վայրը	

h/h	Ծախսեր	Մարդ	Օր	Գումարը (ՀՀ դրամ)	Գումարը արտ- արժույթով	Փոխար- ժեքը	Ընդամենը (ՀՀ դրամ)
1.							
2.							
3.							

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱԶՄ
(Ուսումնամարզական հավաքի)

Nº	Պատվիրակության կազմը	Քանակը (թվերով և տառերով)
1.	Գլխավոր մարզիչ	
2.	Ավագ մարզիչ	
3.	Անձնական մարզիչ	
4.	Մարզիկ	
5.	Բժիշկ	
6.	Մերսող	

Մարզաձևի ազգային ֆեդերացիայի նախագահի
կամ լիազորված անձի ազգանունը, անունը

ստորագրություն

Կ.Տ

ՀԱՅՏ

ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱՄ
ՏԵՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

Մարզաձևը	
Միջոցառման անվանումը	
Անցկացման ժամկետը, վայրը	

h/h	Ծախսեր	Մարդ	Օր	Գումարը (ՀՀ դրամ)	Գումարը արտ- արժույթով	Փոխար- ժեքը	Ընդամենը (ՀՀ դրամ)
1.							
2.							
3.							

Մարզաձևի ազգային ֆեդերացիայի նախագահի
կամ լիազորված անձի ազգանունը, անունը

ստորագրություն

Կ.Տ

(մարզաձևի ազգային ֆեդերացիայի անվանումը)
« » 20 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Միջոցառման փաստացի կատարված ծախսերի

Մարզաձևը	
Միջոցառման անվանումը	
Անցկացման ժամկետը, վայրը	

h/h	Ծախսեր	Մարդ			Օր			Գումարը (<< դրամ)			Գումարը արտարժույթով			Փոխարժեքը			Ընդամենը (<< դրամ)		
		նախա-հաշիվ	փաս-տացի	նախա-հաշիվ	նախա-հաշիվ	փաս-տացի	նախա-հաշիվ	նախա-հաշիվ	փաս-տացի	նախա-հաշիվ	նախա-հաշիվ	փաս-տացի	նախա-հաշիվ	նախա-հաշիվ	փաս-տացի	նախա-հաշիվ	նախա-հաշիվ	փաս-տացի	նախա-հաշիվ
1.																			
2.																			
3.																			

Մարզաձևի ազգային ֆեդերացիայի նախագահի կամ լիազորված անձի ազգանունը, անունը

ստորագրություն
Կ. Տ.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N°

ք. Երևան

«-----» ----- 20 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս աշխատակազմի ղեկավար -----ի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «-----» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ֆեդերացիա), ի դեմս նախագահ (լիազորված անձ) -----ի, որը գործում է «-----» հասարակական կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Նախարարությունը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N° 1 հավելվածի N° 1 աղյուսակի 08 բաժնի 01 խմբի 01 դասի «01. ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» ծրագիրը, «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N° 1 հավելվածի N° 21-1 աղյուսակը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N° 692-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N° 2335-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի -----ի N° ----- -Ա/1 հրամանով (այսուհետ՝ Հրաման) և այլ հրավական ակտերով, պատվիրում է, իսկ Ֆեդերացիան պարտավորվում է ապահովել Հայաստանի Հանրապետության առաջնությունների, հավաքական թիմերի ուսումնամարզական հավաքների, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, միջազգային մրցաշարերի, աշխարհի և Եվրոպայի գավաթի խաղարկությունների, շախմատի համաշխարհային օլիմպիադաների և ունիվերսիադաների (այսուհետ՝ Միջոցառում) կազմակերպումը, անցկացումը և (կամ) դրանց մասնակցությունը:

2. Կողմերի պարտականությունները

2.1 Ֆեդերացիան պարտավոր է՝

2.1.1 հատկացված միջոցներն օգտագործել սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված միջոցառումների կազմակերպման, անցկացման և (կամ) դրանց մասնակցության համար.

2.1.2. սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված միջոցառումների կազմակերպման, անցկացման և (կամ) դրանց մասնակցության համար ապահովել Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի, ուսումնամարզական հավաքների մասնակիցների և պատվիրակությունների կազմի ձևավորումը կամ ընտրությունը՝ համաձայն Հրամանի,

2.1.3 ապահովել իրականացվող աշխատանքների հաշվառումը և հաշվապահական հաշվառման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարումը.

2.1.4 միջոցառման ֆինանսավորում ստանալու հայտը ներկայացնել Նախարարություն Հրամանի հավելված N° 3-ի 4-րդ կետի համաձայն՝ մինչև միջոցառման անցկացմանը նախորդող ամսվա 15-ը, իսկ միջոցառումների ժամանակացույցի փոփոխության դեպքում՝ այն նախապես համաձայնեցնել Նախարարություն հետ և այդ միջոցառման հայտը Նախարարություն ներկայացնել մինչև միջոցառման անցկացմանը նախորդող ամսվա 25-ը.

2.1.5 ներկայացնել ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը՝ Հրամանի № 3 հավելվածի 12-րդ կետի համաձայն:

2.1.6 յուրաքանչյուր միջոցառման ավարտից հետո հինգ օրվա ընթացքում Նախարարություն ներկայացնել մարզական արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (տեղեկանք):

2.1.7 Նախարարության պահանջով վերադարձնել միջոցառման իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների և փաստացի կատարված ծախսերից առաջացած տնտեսումը:

2.1.8 տնտեսված գումարը այլ միջոցառման համար օգտագործելու համար ստանալ Նախարարության գրավոր թույլտվությունը:

2.1.9 չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան ազատ մնացորդը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2.2 Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1 միջոցառումների կազմակերպման, անցկացման և (կամ) մասնակցության նպատակով պետական աջակցության միջոցների շրջանակում, Նախարարության կողմից մշակված միջոցառման ծախսերի նախահաշիվի սահմաններում, Ֆեդերացիային ապահովել համապատասխան ֆինանսական միջոցներով:

2.2.2 Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս իրականացվող միջազգային մարզական միջոցառման նախահաշիվը կազմել Ֆեդերացիայի հայտով և պաշտոնական հրավերով ներկայացված գների համապատասխան, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման:

2.2.3 Ֆեդերացիայի հայտում և պաշտոնական հրավերում արտարժույթով նախատեսված գումարը հատկացնել Ֆեդերացիային ֆինանսավորման հայտը կազմելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած տվյալ արտարժույթի փոխարժեքին համապատասխան:

2.2.4 Ֆեդերացիային ցուցաբերել անհրաժեշտ գործնական և մեթոդական օգնություն:

2.2.5 պարբերաբար վերլուծել Ֆեդերացիայի կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա ծրագրերի բարելավման վերաբերյալ, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ:

3. Կողմերի իրավունքները

3.1 Ֆեդերացիան իրավունք ունի՝

3.1.1 Նախարարությունից պահանջելու վերացնել բոլոր այն թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են Ֆեդերացիային լիարժեք իրականացնելու իր գործունեությունը սույն պայմանագրի շրջանակներում:

3.1.2 իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

3.2 Նախարարությունն իրավունք ունի՝

3.2.1 հետևելու միջոցառումների կազմակերպման, անցկացման և (կամ) մասնակցության ընթացքին:

3.2.2 ցանկացած ժամանակ տվյալ բյուջետային տարվա ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսման մասով իրականացնել ուսումնասիրություն՝ առանց խոչընդոտելու Ֆեդերացիայի աշխատանքներին:

3.2.3 հետ պահանջելու միջոցառման իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների և փաստացի կատարված ծախսերից առաջացած տնտեսումը:

3.2.4 սույն պայմանագրի 2.1 կետի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ֆեդերացիայից հետ պահանջել հատկացված ֆինանսական միջոցները:

3.2.5 հատկացնել միջոցառման ծախսերի նախահաշիվը գերազանցող, փաստացի կատարված, փաստաթղթերով հիմնավորված ֆինանսական և ոչ ֆինանսական ծախսը՝ Նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված դրական մասնագիտական եզրակացության հիման վրա:

3.2.6 ամփոփելու և գնահատելու Ֆեդերացիայի կողմից ներկայացված տարեկան մարզական գործունեության ծրագրի կատարման արդյունավետությունը.

3.2.7 իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4. Պայմանագրի գինը

4.1 Սույն պայմանագրի գինը կազմում է ----- (-----) հազար Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

4.2 Սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարը Նախարարությունը փոխանցում է Ֆեդերացիային՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածի՝ վճարման ժամանակացույցի:

4.3 Նախարարությունը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները Ֆեդերացիայի՝ _____
հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ձևով (փոստային կամ էլեկտրոնային հաղարդակցության միջոցով) նախապես ծանուցելով մյուս կողմին:

5.2 Սույն պայմանագրի 5.1 կետով սահմանված դեպքերում պայմանագիրը լուծված է համարվում Կողմի՝ պայմանագրի լուծման ծանուցումը ստանալու պահից:

6. Պայմանագրի փոփոխումը, գործողության դադարումը և (կամ) լուծումը

6.1 Սույն պայմանագրի փոփոխումը և (կամ) լրացումը կատարվում է Կողմերի համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրով, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

6.2 Սույն պայմանագրի գործողությունը դադարեցվում և (կամ) լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1 Սույն պայմանագիրը գործում է _____ թվականի բյուջետային տարում:

8. Այլ դրույթներ

8.1 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և (կամ) լրացում կատարվում է գրավոր:

8.2 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն, երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.3 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

8.4 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Վեճերի լուծման կարգը

9.1 Սույն պայմանագրից ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և սպորադրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՖԵԴԵՐԱՑԻԱ

Հայաստանի Հանրապետության սպորտի
և երիտասարդության հարցերի
նախարարություն
ք. Երևան, Արվյան 9
Հ/Հ 900011591020
ՀՎՀՀ 02586282
Էլ. փոստ՝ msy@msy.am

Անվանում
Հասցե
Հ/Հ
ՀՎՀՀ
Էլ. փոստ՝

Աշխատակազմի ղեկավար՝

Նախագահ՝
(լիազորված անձ)*

Կ. Տ.

Կ. Տ.

*Լիազորագիրը և անձնագրի պատճենը կցվում է:

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության _____ թվականի պետական բյուջեից (հազար ՀՀ դրամ), ընդ որում՝													
		I եռամսյակ			6 ամիս			9 ամիս			տարի				
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր		
		3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14		
1	2														
08.01.01.01 ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում															
ԸՆԴԱՄԵՆԸ															

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության սպորտի
և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հ/Հ 900011591020
ՀՀՀՀ 02586282
Էլ. փոստ՝ msy@msy.am

Աշխատակազմի ղեկավար՝

Կ. Տ.

ՖԵԴԵՐԱՑԻԱ

Անվանում
Հասցե
Հ/Հ
ՀՀՀՀ
Էլ. փոստ՝

Նախագահ՝
(լիազորված անձ)*

Կ. Տ.